ՈՐՈՇՈՒՄ

Բողոքարկման հանձնաժողովի
Քննական աշխատանքների ստուգման և գնահատման մասին

15.02.2023թ.

Բարձրագույն դատական խորհրդի՝ թիվ ԲԴԽ-20-Ո-76 որոշմամբ ձևավորված Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով),

կազմով՝
ԲԴԽ անդամ Սերգեյ Չիչոյանի,
Դատական դեպարտամենտի ներկայացուցիչ Ալեքսան Չուխոյանի,
Արդարադատության նախարարության ներկայացուցիչ Վարազդատ Սուքիասյանի,

Քննելով

դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով հատուկ կարգով ս.թ. փետրվարի 2-ին անցկացված որակավորման գրավոր քննության աշխատանքների վերաբերյալ թվով 2 բողոքները՝ փակ վիճակում ստացված և տեղում բացված ծրարների առանձին **«78649»** և **«65384»** ապանձնավորված անհատականացման ծածկագրերով, հիմք ընդունելով թիվ ԲԴԽ-20-Ո-76 որոշումը և ղեկավարվելով ԲԴԽ-5-Ո-16 որոշման պահանջներով,

Որոշեց

1. «78649» անհատականացման ծածկագիրը կրող բողոքը՝
բավարարել մասնակի.

թեստի **«Նյութական և դատավարական իրավունքի խնդիրներ»** բաժնի 3-րդ խնդրի գնահատականը՝ իրավաբանական գրավոր խոսքի հստակությունն ու տրամաբանական սահունությունը՝ բարձրացնել 0.5 միավորով, այն պատճառաբանությամբ, որ նյութական և դատավարական նորմերը մեջբերվել և մեկնաբանվել են միասնական հարթության մեջ և տրամաբանական խզում թույլ չի տրվել:

թեստի **«Նյութական և դատավարական իրավունքի խնդիրներ»** բաժնի 4-րդ խնդրի գնահատականը՝ վերլուծական և մեկնաբանման հմտությունների մասով բարձրացնել 0.5 միավորով:

թեստի **«Նյութական և դատավարական իրավունքի խնդիրներ»** բաժնի 5-րդ խնդրի գնահատականը՝ մասնագիտացման ոլորտում իրավական գիտելիքների

Created With Tiny Scanner

մասով բարձրացնել 1 միավորով, վերլուծական և մեկնաբանման հմտությունների մասով բարձրացնել 0.5 միավորով, կատարված վերլուծությունից բխող եզրակացությունը 0.5 միավորով, իրավաբանական գրավոր խոսքի հստակությունն ու տրամաբանական սահունությունը՝ 0.5 միավորով, այն պատճառաբանությամբ, որ հիշատակվել և մեկնաբանվել են ինչպես անմիջականորեն ծագած կասկածի հիման վրա անձի ձերբակալման, այնպես էլ ձերբակալման դեմ բողոքի քննությանը վերաբերող նորմերը՝ հանգելով ըստ էության ճիշտ եզրահանգման: 2-րդ ենթահարցի մասով ՕՀ միջոցառման ապացուցողական նշանակության հետ կապված վերլուծությունը թեև թերի է, սակայն ՕՀ միջոցառումների արդյունքում մեկ այլ ծանր հանցագործություն բացահայտելու մասով որոշակի առումով հիմնավոր:

թեստի **«Նյութական և դատավարական իրավունքի խնդիրներ»** բաժնի 6-րդ խնդրի գնահատականը՝ մասնագիտացման ոլորտում իրավական գիտելիքների մասով բարձրացնել 0.5 միավորով, վերլուծական և մեկնաբանման հմտությունների մասով բարձրացնել 1 միավորով, իրավաբանական գրավոր խոսքի հստակությունն ու տրամաբանական սահունությունը՝ 0.5 միավորով այն պատճառաբանությամբ, որ խնդրի երկրորդ ենթահարցին տրվել է ըստ էության ճիշտ պատասխան:

1.1. Գնահատված միավորների վերանայման արդյունքում թեստային հարցերի ընդհանուր գնահատականը թողնել անփոփոխ՝ 46 միավոր, իսկ իրավական խնդիրների 29 միավոր գնահատականը փոփոխել՝ այն դարձնելով 34.5 միավոր:

1.2. Բողոքը մնացած մասով մերժել անհիմն լինելու պատճառաբանությամբ:

1.3. Թեստային բոլոր առաջադրանքների միավորների ընդհանուր հանրագումարը՝ 80.5 միավոր:

2. **«65384» անհատականացման ծածկագիրը կրող բողոքը՝**
<u>բավարարել մասնակի</u>.
թեստի **«Նյութական և դատավարական իրավունքի խնդիրներ»** բաժնի 1-ին խնդրի գնահատականը՝ վերլուծական և մեկնաբանման հմտությունների մասով բարձրացնել 0.5 միավորով, իրավաբանական գրավոր խոսքի հստակությունն ու տրամաբանական սահունությունը՝ բարձրացնել 0.5 միավորով, այն պատճառաբանությամբ, որ խնդրին տրվել է լիարժեք պատասխան:

թեստի **«Նյութական և դատավարական իրավունքի խնդիրներ»** բաժնի 2-րդ խնդրի գնահատականը՝ իրավաբանական գրավոր խոսքի հստակության և տրամաբանական սահունության մասով բարձրացնել 0.5 միավորով:

Created With Tiny Scanner

թեստի **«Նյութական և դատավարական իրավունքի խնդիրներ»** բաժնի 3-րդ խնդրի գնահատականը՝ մասնագիտացման ոլորտում իրավական գիտելիքների մասով բարձրացնել 1 միավորով, վերլուծական և մեկնաբանման հմտությունների մասով բարձրացնել 0.5 միավորով, կատարված վերլուծությունից բխող եզրակացությունը բարձրացնել 0.5 միավորով այն պատճառաբանությամբ, որ ըստ էության տրվել է խնդրի ճիշտ պատասխան, այն է՝ որպես խնդրի լուծում պետք է կայացվեր քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշում՝ հանցակազմի բացակայության հիմքով, ինչն արվել է մասնակցի կողմից:

թեստի **«Նյութական և դատավարական իրավունքի խնդիրներ»** բաժնի 4-րդ խնդրի գնահատականը՝ վերլուծական և մեկնաբանման հմտությունների մասով բարձրացնել 0.5 միավորով:

թեստի **«Նյութական և դատավարական իրավունքի խնդիրներ»** բաժնի 5-րդ խնդրի գնահատականը՝ մասնագիտացման ոլորտում իրավական գիտելիքների մասով բարձրացնել 0.5 միավորով, վերլուծական և մեկնաբանման հմտությունների մասով բարձրացնել 0.5 միավորով, այն պատճառաբանությամբ, որ խնդրին տրվել է լիարժեք պատասխան:

թեստի **«Նյութական և դատավարական իրավունքի խնդիրներ»** բաժնի 6-րդ խնդրի գնահատականը՝ վերլուծական և մեկնաբանման հմտությունների մասով բարձրացնել 0.5 միավորով, իրավաբանական գրավոր խոսքի հստակությունն ու տրամաբանական սահունությունը՝ 0.5 միավորով, այն պատճառաբանությամբ, որ խնդրի երկրորդ ենթահարցին տրվել է ճիշտ պատասխան:

2.1. Գնահատված միավորների վերանայման արդյունքում թեստային հարցերի ընդհանուր գնահատականը թողնել անփոփոխ՝ 54 միավոր, իսկ իրավական խնդիրների 20 միավոր գնահատականը փոփոխել՝ այն դարձնելով 26 միավոր:

2.2. Բողոքը մնացած մասով մերժել անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2.3. Թեստային բոլոր առաջադրանքների միավորների ընդհանուր հանրագումարը՝ 80 միավոր:

Հանձնաժողովի անդամներ՝

Սերգեյ Չիչոյան _____

Ալեքսան Չուխոյան _____

Վարազդատ Սուքիասյան _____

Created With Tiny Scanner